ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ապրիլի 2014 թ. N –Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԱՇԽԱԲԱԴ (ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ) ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել Աշխաբադ քաղաքում ստորագրված «Երևան (Հայաստանի Հանրապետություն) և Աշխաբադ (Թուրքմենստան) քաղաքների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԱՇԽԱԲԱԴ (ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ) ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի և Թուրքմենստանի մայրաքաղաք Աշխաբադի միջև երկկողմ համագործակցության հաստատման անհրաժեշտությունից և նպատակ ունենալով զարգացնել երկկողմ կապերը, մի շարք ոլորտներում համագործակցության ծավալումը, տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը, անհրաժեշտ եմ համարում 2014 թվականի ապրիլի 8-ին Աշխաբադ քաղաքում ստորագրված «Երևան /Հայաստանի Հանրապետություն/ և Աշխաբադ /Թուրքմենստան/ քաղաքների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

Հաշվի առնելով տնտեսական, հումանիտար և մշակութային համագործակցության ընդլայնման հարցում փոխադարձ համաձայնությունը, ինչպես նաև գործընկերային բարեկամական կապերը՝ վերոհիշյալ համաձայնագրով նախատեսվում է, որպեսզի Երևանի քաղաքապետարանը (Հայաստանի Հանրապետություն) և Աշխաբադի Խյակիմլիկը (Թուրքմենստան) համագործակցեն հետևյալ ուղղություններով.

1. առևտրա-տնտեսական ոլորտ
2. կրթության ոլորտ
3. մշակույթի ոլորտ
4. զբոսաշրջության ոլորտ
5. երիտասարդական քաղաքականության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԱՇԽԱԲԱԴ (ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ) ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Երևան (Հայաստանի Հանրապետություն) և Աշխաբադ (Թուրքմենստան) քաղաքների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ԱՇԽԱԲԱԴ (ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ) ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևան (Հայաստանի Հանրապետություն) և Աշխաբադ (Թուրքմենստան) քաղաքների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագրի հաստատման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2014 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Համաձայնագիր

Երևան (Հայաստանի Հանրապետություն) և Աշխաբադ (Թուրքմենստան) քաղաքների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունների հաստատման մասին

Երևանի քաղաքապետարանը (Հայաստանի Հանրապետություն) և Աշխաբադ քաղաքի Խյակիմլիկը (Թուրքմենստան), այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով Երևան և Աշխաբադ քաղաքների միջև բարեկամական կապեր հաստատելու փոխադարձ ցանկությունը,

հաշվի առնելով տնտեսական, հումանիտար և մշակութային համագործակցության ընդլայնման հարցում փոխադարձ հետաքրքրությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագիրը համագործակցության հարաբերություններ է հաստատում Երևան և Աշխաբադ քաղաքների միջև:

Հոդված 2

Կողմերն իրենց իրավասության շրջանակներում, Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան կիրականացնեն համագործակցություն՝ իրավահավասարության, փոխշահավետության, հարգանքի և վստահության սկզբունքների հիման վրա:

Հոդված 3

Կողմերը կհամագործակցեն հետևյալ ուղղություններով՝

- առևտրա-տնտեսական ոլորտում,
- կրթության ոլորտում,
- մշակույթի ոլորտում,
- զբոսաշրջության ոլորտում,
- երիտասարդական քաղաքականության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում:

Հոդված 4

Տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության ընթացքում Կողմերը՝

- կաջակցեն Կողմերի պաշտոնական պատվիրակությունների փոխանակման կազմակերպմանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային փորձն ուսումնասիրելու նպատակով,
- տեղեկատվություն կփոխանակեն քաղաքային կայուն զարգացման, ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում լավագույն փորձերի վերաբերյալ,
- կիրականացնեն Կողմերի պատմության, մշակույթի, ավանդույթների հետ ծանոթացմանն ուղղված գործունեություն:

Հոդված 5

Առևտրա-տնտեսական ոլորտում համագործակցության շրջանակներում Կողմերը՝

- կաջակցեն առևտրա-տնտեսական համագործակցության ընդլայնմանը, տնտեսվարող սուբյեկտների համատեղ

ձեռնարկատիրական և ներդրումային գործունեության համար պայմանների ապահովմանը,

- կխրախուսեն ցանկացած կազմակերպա-իրավական ձևի տնտեսավարող սուբյեկտների միջև անմիջական կապերը: Մատակարարվող ապրանքների և ծառայությունների ծավալները, անվանացանկը, գները, փոխադարձ հաշվարկների պայմանները և կարգը, ինչպես նաև պատասխանատվությունը ստանձնած պարտավորությունների նկատմամբ տնտեսվարող սուբյեկտների միջև պայմանագրերի առարկա են:

Հոդված 6

Կրթության ոլորտում համագործակցության շրջանակներում Կողմերը կիրականացնեն մանկավարժների և սովորողների խմբերի փոխանակումներ՝ Կողմերի կրթական հաստատություններում ուսումնա-դաստիարակչական աշխատանքի կազմակերպման փորձի ուսումնասիրության, դասավանդման մեթոդների կատարելագործման և պատմական ու մշակութային արժեքների հետ ծանոթանալու համար:

Հոդված 7

Մշակույթի ոլորտում համագործակցության շրջանակներում Կողմերը՝

- կաջակցեն ստեղծագործական խմբերի և մշակութային գործիչների մասնակցությանը Երևան և Աշխաբադ քաղաքների Օրերի տոնակատարությունների շրջանակներում ազգային մշակույթների փառատոնին,
- կիրականացնեն գեղարվեստական դպրոցների սովորողների աշխատանքների ցուցահանդեսների, Երևան և Աշխաբադ քաղաքներում մշակութային միջոցառումների վերաբերյալ տեսա- և ֆոտոնյութերի փոխանակում,

- կաջակցեն Երևան և Աշխաբադ քաղաքների գրադարանների միջև համագործակցության հաստատմանը:

Հոդված 8

Զբոսաշրջության ոլորտում համագործակցության շրջանակներում Կողմերը՝

- կձևավորեն հնարավոր զբոսաշրջային ուղղություններ Երևան և Աշխաբադ քաղաքների միջև,
- կկազմակերպեն ճանաչողական շրջայցեր զբոսաշրջային ընկերությունների և հյուրանոցային բիզնեսի ներկայացուցիչների համար:

Հոդված 9

Երիտասարդական քաղաքականության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում համագործակցության շրջանակներում Կողմերը՝

- կնպաստեն Երևան և Աշխաբադ քաղաքների սպորտային կազմակերպությունների միջև կապերի հաստատմանը,
- կկազմակերպեն Երևան և Աշխաբադ քաղաքների երիտասարդների սպորտային միջոցառումներին պատանի մարզիկների թիմերի մասնակցությունը:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի իրականացման, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների վերահսկողության նպատակով կարող են իրականացվել երկկողմ հանդիպումներ, բանակցություններ, նիստեր, խորհրդակցություններ և այլ միջոցառումներ՝ Կողմերի

պատվիրակությունների և առանձին ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին Կողմերի վերջին ծանուցագրի ստացման օրվանից և կնքվում է հինգ (5) տարի ժամկետով: Սույն Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդական հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը համապատասխան ժամկետի ավարտից ոչ ուշ, քան վեց (6) ամիս առաջ գրավոր չի տեղեկացնում մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է քաղաք Աշխաբադում 2014 թվականի ապրիլի 8-ին երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Երևանի Քաղաքապետարանի (Հայաստանի Հանրապետություն) կողմից	**Աշխաբադ քաղաքի Խյակիմլիկի (Թուրքմենստան) կողմից**